

## Հայտարարություն

### Դիլիջան քաղաքի ջրամատակարարման վերաբերյալ

Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի տարածաշրջանում խմելու ջրի բարձորակ ստորերկրյա ջրաղբյուրների բացակայության պայմաններում ջրամատակարարումը իրականացվում է մակերևութային ջրաղբյուրներից՝ Դիլիջան քաղաքը սնուցող թվով երեք մաքրման կայանների միջոցով: Մակերևութային ջրառով է պայմանավորված արտաքին գործոնների ազդեցությունը ջրի որակի կազմավորման վրա: Արդյունքում գրանցվում են ջրի որակի ցուցանիշների (զգայորոշական ցուցանիշներ, օրգանական միացություններ, ազոտ պարունակող նյութեր և այլն) զգալի սեզոնային տատանումներ: Հատկապես գարնանային ձնհալի շրջանում ստեղծվում է արտակարգ իրավիճակ Ֆրոլովո ջրի մաքրման կայանում, երբ արագ հոսող փոքր լեռնային գետերի ջրի պղտորությունը գերազանցում է մաքրման կայան մտնող ջրի որակի համար նախատեսված սահմանային նորմերը: Արդյունքում, Ֆրոլովո կայանի կառուցվածքները, անկախ տեխնոլոգիական և շահագործման ռեժիմներից, չեն հասցնում մաքրել ջուրը և ապահովել բնակչությանը մատակարարվող ջրի որակը՝ պահանջվող հիգիենիկ նորմերի համաձայն: Այդ պայմաններում ջրային բնույթի սուր վարակիչ հիվանդությունների բռնկումների առաջացումը քիչ հավանական է, քանի որ առաջնահերթ վատթարանում են ջրի սպառողական հատկությունները: Նշված օրերին կազմակերպվում է ջրի որակի հսկողություն՝ ուժեղացված ռեժիմով: Ջրի օգտագործումն արգելող որոշում չի կայացվում նաև սանիտարական ծառայությունների կողմից՝ ելնելով բնակչությանը սպառնացող վտանգի բացակայությունից:

Ջրի որակի սեզոնային վատթարացումը կանխելու նպատակով վերջին տարիների ջրամատակարարման համակարգերի վերակառուցման ծրագրերով իրականացվել են մի շարք աշխատանքներ: Վերանորոգվել են Գոլովինո և Բլդան ՋՄԿ-ները, փոխարինվել և վերանորոգվել տեխնոլոգիական խողովակները, փականները, պարզարանները: Համալրվել է քամիչների կվարցային ավազը, փոխարինվել նրանց լվացման համար նախատեսված պոմպերը: Տեղադրվել են հեղուկ քլորի, քլորակրի, կոագուլյանտի և կրի դոզայատրման ճշգրիտ սարքերը: Ստեղծել է ժամանակակից սարքավորումներով հագեցված մանրէաբանական լաբորատորիա, կազմակերպվել մաքրման լաբորատոր տեխնոլոգիական հսկողություն: Ընկերության կողմից փուլ առ փուլ իրենց լուծումն են ստանում բազմաթիվ այլ հիմնահարցեր:

Վերջին օրերին Ֆրոլովո ջրի մաքրման կայանից մատակարարվող ջրի պղտորումների պայմաններում ընկերության կողմից իրականացվեցին հնարավոր միջոցառումները՝ ջրային բնույթի սուր վարակիչ հիվանդությունների կանխարգելման, խմելու ջրի պահանջվող որակի ապահովման համար: Ֆրոլովո ջրի մաքրման կայանից սնվող թաղամասերի ջրամատակարարումը գտնվում է ընկերության հատուկ հսկողության տակ և հնարավորինս ամեն ինչ արվում է ջրի որակը պատշաճ մակարդակի հասցնելու և պահպանելու համար: